South Coast AQMD

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀԻՑ ՀԵՏՈ. ԱՆՎՏԱՆԳ ՄԱՔՐՈՒՄ

ՄՈԽԻՐԸ ՄԱՔՐԵԼԻՍ՝

Կրեք ամուր տեղադրվող միանգամյա օգտագործման ռեսպիրատոր (N-95 կամ P-100):

Կրեք ակնոցներ, ձեռնոցներ, երկարաթև վերնաշապիկներ, երկար տաբատներ, կոշիկներ և գուլպաներ՝ մաշկի հետ շփումից խուսափելու համար:

Հատակի վրա թեթևակի ջուր ցողեք, այնուհետև զգուշորեն ավլեք ավելով կամ թաց շվաբրով:

Հավաքեք մոխիրը պլաստիկ տոպրակի մեջ և թափեք սովորական աղբարկղը:

Լվացեք մոխիրը մեքենաների և բացօթյա խաղալիքների վրայից:

Ձեր տան ներսում օգտագործեք HEPA զտիչով փոշեկուլ կամ միանգամյա օգտագործման զտիչով տոպրակներով նմանատիպ այլ սարքեր:

Մոխիրով լցված ջուրը թափեք վերգետնյա տարածքների վրա՝ տարափային ջրափողրակներից և անձրևաջրերի անցքերից հեռու: Մի օգտագործեք տերևների օդամուղային (փչող) սարքեր:

Մաքրեք ընտանի կենդանիներին մոխիրից:

Անտառային հրդեհներից մոխիրը մաքրելիս նախազգուշական միջոցներ ձեռնարկեք: Մոխրի մասնիկները սովորաբար ծխի մասնիկներից մեծ են, բայց այնուամենայնիվ կարող են առողջական խնդիրներ առաջացնել: Սրտի կամ թոքերի հիվանդություններ ունեցող անձինքն, տարեցները, երեխաները և հղի կանայք պետք է հատուկ զգուշություն ցուցաբերեն մոխրի հետ գործ ունենալիս: